

նախմբութիւնները, զորոնք կը կատարէր մասնաւոր ուխտադնացութիւններով, ծոմապահութիւններով եւ նուիրատուութիւններով, կը տեսնուի Փաւստեայ Բիւզանդեայ Պատմութեան: Կան այդ շարքին մէջ տոներ, որոնց հնութիւնը ըստ աւանդութեան մինչեւ Ս. Գրիգոր կ'իջնայ, ինչ ինչ նոյն իսկ Լուսաւորիչէն կարգուած կը համարուի: Փաւստոս այդ տոներէն յանուանէ կը թուէ մէկ քանին:

ա. Եկեղեցւոյ տօն. Նաւակատիքն Նախեկեղեցւոյն յԱշտիշատ:

բ. Տօն Յովհաննու ի Տարօն. «Մարդաբէանոցին Յովհաննու»:

գ. Տօն Առաքելոց ի Տարօն. «Հանդիստ Առաքելոցն»: «Այս տեղիք վասն յառաջակարգութեան՝ կանոնաւ ի հայրապետացն եւ ի թագաւորացն պատուելալք լինէին»:

դ. «Եկեղեցին Թորդանու վասն զերեզմանացն հայրապետին Գրիգորի (եւ յաջորդացն նորա)»:

ե. «Յիշատակ թագաւորին Տրդատայ». «զի սիրելի էր աշխարհին պատուել զյառաջընծայն Քրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ»:

զ. «Նոյնպէս եւ զյառաջեպիսկոպոսն՝ զնախավաստակն զԳրիգորիոս»:

է. «Սոյնպէս եւ ի դաւան Այրարատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր Գայիանէն եւ Հռիփսիմէն կային հանդերձ զործակցօքն իւրեանց»:

«Վասն այսորիկ կամ եղեւ աշխարհին զնախնեաց ժամանակին հարանց եպիսկոպոսաց զայս տեղիս պատուել, ուր սոքա եղեալ էին» (Փաւստ. Գ. 14):

ը. Տօն Մարտիրոսաց: Փաւստոս, Գ. 3 կը գրէ. «Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց հանդերձ թագաւորօքն եւ մեծամեծօքն, նախարարօքն եւ աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս (յԱշտիշատ), որ յառաջ էին տեղիք պատկերաց կոոցն... եւ եղեն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք: Մանաւանդ յսցն ի գլխաւոր տեղին՝ յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ (կարգա՞լ «յեւթներորդում Մահմի ամսոյ»): Որք զնոյն ունէին սովորութիւն առաւել եւս ի մեծի Մարգարէարան Մատրանն Յովհաննու. սոյնպէս եւ յԱռաքելարանս Տեառնաշակերտացն. սոյնպէս եւ ի Վկայարանս Մար-

տիրոսացն ամի ամի ժողովեալք՝ զորն տօնին յիշատակի նոցա վարուցն զործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային»:

Ք. Տօն Ս. Գրիգորիսի յԱմարաս. «Եղին զնա առ եկեղեցւան, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի... եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ եւ աշխարհաց դաւառացն այնոցիկ, զորա զօր տօնին զյիշատակ քաջութեանն ցնծան» (Փաւստ. Գ. 6):

ժ. Ի Բագաւան Յունիս 24ին կը տօնախմբուէր Յովհաննէս Մկրտչի Ծննդեան յիշատակը (տե՛ս վարը):

Թէպէտ Ե. դարու մատենադրութիւնը աղքատ է տօնակատարութեանց յիշատակութեամբ, բայց մեզի բաւականէն աւելի մանրամասնութեամբ Հայոց Եկեղեցական տարւոյ պատկերը կու տայ Մահակի վերագրուած կանոնախումբին Զ. հատուածը, թէեւ է. դարու առաջին քառորդէն:

Մահակի վերագրուած կանոնաց այս խումբը շատ հետաքրքրական է Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցի ուսումնասիրութեան համար:

Կանոնացս խմբադիրը կը զանազանէ տօներ, երբ ժողովուրդին նուիրները կը պատկանին Վանքին, եւ դարձեալ տօներ երբ այդ նուէրները կը վերաբերին Քահանայից:

- Ա. 1. Տօն Ս. Յովհաննու Մկրտչին եւ վկային:
- 2. Տօն ամենայն Մարտիրոսաց զոր Մատրունս կոչեմք:
- 3. Վարդափառին:
- 4. Տօն սրբոյ Յայտնութեան:
- 5. Քառասնորդք նորին:
- 6. Տեստնընդառաջին:
- 7. Առաջաւոր պահոց:
- 8. Տօն Միջնոց Որդացն Չատկին:
- 9. Օր Ղազարու:
- 10. Մեծ հինգշաբթի Չատկին:
- 11. Երկուշաբթի Չատկին:
- 12. «Դիր Չատկին»:
- 13. Տօն Համբառնալոյ Տեառն յերկինս:
- 14. Տօն վախճանելոցն յերս Հրոտից ամսոյ:

- Բ. Ամուսնացելոց քահանայից:
 - 1. Շարաթն Չատկին:
 - 2. Չատկին սուրբ:
 - 3. Բ. Չատկին:

- 4. Բ. Չատկէն ի վեր կիրակէքն ամենայն:
- 5. Տօն Ս. Աստուածածնին:
- 6. Վարդափառն:
- 7. Քառասնորդք Առաքելական տօնից:
- 8. Հաւատացելոց Չատկին:
- 9. Տօնք Բարեկենդանին:
- 10. Ողորմեանն Մեծ:
- 11. Տօնք յանուն Առաքելոց եւ Մարգարէից:

Ասոնց մասին պիտի խօսինք առանձին առանձին:

(Շարունակելի:) Ը. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՎԵՍՊՈՒՐԵՎՈՆ - ՎԵՆԻ ՎՆՆՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԸՆԳՀԵՆՈՒՐ՝ ԶՆՆԵՎՈՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շարունակութիւն):

13. ՎԱՆՔԵՐՈՒ ՄԷՋ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԵՐ ԿԱՄ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Վանից հայր, որ ստէպ իբր վանհայր կամ վանքի առաջնորդ կը նշանակէ եւ երբեմն ուրոյն պաշտօն մը կ'ազնարկէ: Յիշատակադրութիւններու մէջ եւ այլուր կը հանդիպինք՝ «Յովհաննէս վանից հայր էր» (ՎՎՎ. Ա. էջ 194), «եւ զգլխաւոր վանանցն (ՎՎՎ. Ա. էջ 194), «եւ զգլխաւոր վանանցն լեալ եղեալ (էին) ի խորափոր խաւարային բանտի» անդ Ա. էջ 285—286), «Վարդապետ հայր» (էջ 290), «Ստեփանոս՝ հայր վանաց» (անդ Բ. էջ 691):

Վեֆիլ. վանքերու մէջ առաջնորդներու եւ վանհայրերու տեղապահներ՝ վեֆիլներ կը կարգուէին՝ անոնց բացակայութեան, անկարողութեան, մանաւանդ ծերութեան շրջանին եւ աթոռին պարագային պարագային (հրաժարումի եւ մահուան պատճառաւ), հմտ. ՎՎՎ. Ա. էջ 39, 71, 242, 325, 327 եւն):

Հերպետ կամ հէրպետ կամ հայրպետ: Յիշատակարաններու կամ յիշատակադրութիւններու մէջ ստէպ այս բառին կը հանդիպինք՝ «Յիշեցէք... զՄկրտիչ հէրպետ» (ՎՎՎ. Ա. էջ 203), «ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս... եւ հէրպետութեան Կարապետ արեղային, յոյժ խոնարհ եւ բարեմիտ, քրտնաջան ի բանս սուրբ

ուխտիս» (ՎՎՎ. Ա. էջ 351), «Եւ ի հէրպետութեան բարեբարոյ եւ մաքրամիտ կրօնաւորի Մկրտիչի սրբասերի» (ՎՎՎ. Ա. էջ 372), «Յիշել զհէրպետ տէր Միւթարն», (անդ Ա. էջ 374), «...տէր Խաչատուր հէրպետին» (անդ, Ա. էջ 376, հմտ. անդ դեռ՝ էջ 16, 62 (198՝ հէրպետն), 221—224, 226, 265, 267, 307, 310, Բ. 407, 452, 691, 693 եւն եւն):

«Երեւակ»ի մէջ 1858 ին (Թ. 43, էջ 203—204) կը հրատարակուի Իգնատիոս վ. Ղուկասի Աւետարանին մեկնութեան կցուած յիշատակադրութիւն մը՝ «Ի թուրքերութիւն հայկազեան տոմարիս Ռժի (1671) ի վանս Ղազարու... եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Դաւիթ ճըզնաղեաց վարդապետի եւ տէր Ստեփանոս կրօնաւոր հէրպետի»: Հրատարակելը յիշատակադրութեան կը կցէ հետեւեալ խորհրդածութիւնը՝ «Ծանօթ չէ մեզի թէ առաջնորդին քով հէրպետ ըսածը ինչ պաշտօն ունէր, բայց մեծ եւ պատուաւոր պաշտօն մը եղած պիտի ըլլայ, որ հոս զատ կը յիշուի: Արեւելքի կողմերը տեղ տեղ հայր եքր հէր կ'արտասանեն, այս արտասարտը հէր կ'արապետն ալ կ'ըլլայ հայրանութիւնովս հէրապետն ալ կ'ըլլայ հայրապետ, եւ որովհետեւ կրօնաւոր քահանայքն հայր անուանելը սովորութիւն եղած է. այս առումով հէրպետն ալ կ'ըլլայ կրօնաւորներու գլուխի եւ վանհայր կամ արքայ բառին նշանակութիւնը կ'ունենայ եւ առաջնորդ եղած ատենն ալ Արքայն վանքին կրօնաւորներուն վրայ անմիջական իշխանութիւն ունենալով՝ անունը յատուկ յիշուելու չափ մեծ էր պաշտօնը»: Իսկ «Նօշուելու չափ մեծ էր պաշտօնը»: Իսկ «Նօշուելու չափ մեծ էր պաշտօնը» հրատարակելը հէրպետ բառին իմաստին մասին կը գրէ՝ «վերակացու ուխտին կամ փոխանորդ վանհայր ի վերայ զործակալաց մենաստանին» (էջ 175, ծն. 5): Այսպէս՝ մինչ առաջինը հէրպետին իշխանութիւնը կամ պաշտօնը վանականներու կամ միաբաններու վրայ կը տարածէ. երկրորդը վանքին զործակալներու՝ պաշտօնանեաներու վրայ: Նկատի ունենալով յիշատակադրութիւնները պիտի ըսենք թէ այս պաշտօնը ընդհանրապէս մեծ վանքերու մէջ զոյուցիւն ունէր եւ զայն ստանձնողին հանդիպինք՝ «Յիշեցէք... զՄկրտիչ հէրպետ» (ՎՎՎ. Ա. էջ 203), «ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս... եւ հէրպետութեան Կարապետ արեղային, յոյժ խոնարհ եւ բարեմիտ, քրտնաջան ի բանս սուրբ

Հայ կաթողիկոսներն ու եպիսկոպոսները, թաղաւորներն ու իշխանները վանքերն ու եկեղեցիներն իրենց մշտնջենական հանգստափայր կ'ընտրեն: Վասպուրականի Ձորոյ վանքի մէջ կը թաղուին քանի մը կաթողիկոսներ եւ իշխանականներ (Վ.Վ.Ս. էջ 253): Աղթամարի մէջ կ'ամփոփուին Արդմանէ կիւրապարտան ու անոր կինը (անդ Ա. էջ 110): Վարազի մէջ բերուած ու դրուած կ'աւանդուին Պետրոս Գեոտադարձ կաթողիկոսի, Սենեքերիմ թաղաւորի, Խուշուշ բամբուլի եւ ուրիշ Արծրունիներու անշնչացած մարմինները (անդ՝ Ա. էջ 273): Իսկ Ս. Խաչի կամ ձայրայ վանքը Արծրունի ազնուազարմ նախարարական տան դամբանարանն էր (Հանդէս Ամսօրեայ, 1942, էջ 196—198):

Վանականներու (կրօնաւորներու) եւ անոնց առաջնորդներու թաղումի յատուկ արարողութիւն նշանակուած է՝ ա. «կանոն յորժամ կրօնաւոր վախճանի, այսպէս յուղարկեն ի հանդիսան: Չսպեն զնոյն միայն բոլորովին սքեմովն եւ այծօքն, բաճկոնաւն եւ կնկուղովն, կօտովն եւ կոչկովն... (Մաշտոց, Թ. 68, դրուած 1567ին կամենից եւ 1ով³⁴, հմմտ. Տաշեան, Մայր ցուց. էջ 306), որ սակայն Վանի մէջ 1418ին գրուած Մաշտոցի մէջ չկայ (հմմտ. անդ Թ. 108 էջ 382) եւ Հայաստանի մէջ այլուր գրուած մեր ունեցած Մաշտոցներու մէջ: Բայց հաւանականաբար Նոր Ձուղայի մէջ 1690ին գրուած Մաշտոցի մը մէջ կը գտնուի. հմմտ. Սիւրմէեան Յուց. հայ. Ձեռ. Հալէպի. Բ. էջ 158):

բ. «Կանոն յորժամ եպիսկոպոս... կամ ուխտի առաջնորդ կատարի մահուամբ այսպէս յուղարկեն ի Քրիստոս: Առնու եպիսկոպոսն զբազմութիւն ուխտին եւ երթան ի տեղին, ուր զհանդիսան պատրաստել կամին... (Որուն պատրաստութենէ եւ ննջեցեալին լուացումէ յետոյ՝ տեղի կ'ունենայ պատանքը)՝ Եւ ապա զգեցուցանեն պարեզաւտ ապիտակ եւ անդրափարտիս ի ներքոյ եւ անդ յոտան եւ գաւտի մաշկեղէն

ընդ մէջն եւ կնկուղ ի դլուին եւ փակեղն դուստլքն եւ փիւրն սպիտակ եւ յաջն ափն դաստառակաւ խունկ զիցեն եւ ամփոփեցեն եւ զիցեն անդրէն ի մահիճսն՝ դլուին յարեւմուտս եւ դաշնն ի յերկինս...» յետոյ կը յաջորդեն սաղմոս մաղթանք, շարական, ընթերցուած եւն³⁵ (Տաշեան, Մայր ցուց., էջ 625, Թ. 240, Ձեռագիր ԺԱ.—ԺԲ դարէ. նոյն կանոնը կայ եւ Թ. 280 Ձեռագիր Գահանայաթագ Մաշտոցի մէջ, դրուած 1214ին՝ «ի դիւղս Ուռեթիլ» (անդ, էջ 704) հմմտ. դեռ Սիւրմէեան, Յուց. հայ. Ձեռ. Հալէպի, Ա. էջ 158):

15. ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՏՈՐԱԿԱՐԳՈՒՄ

Վասպուրականի վանքերը իրենց ներքին վարչութեան եւ զոյքերու մատակարարութեան մէջ կանխապէս իրարմէ անջատ եղած են եւ որ եւ է կերպով իրարմէ կախում չեն ունեցած³⁶: Միայն թէ յետոյ անոնցմէ ոմանք միարաններու նուազութեան եւ զանազան պատճառներու հետեւանքով ուրիշ վանքի (Լիմի, Վարազի, եւն) գերիշխանութեան կ'ենթարկուին, մասնաւորապէս կալուածներու եւ ինչքերու հողատարութեան ու մատակարարութեան հարցերու մէջ³⁷:

Վանքերը միարաններէ ընտրուած կամ ազգային վերին մարմնէ նշանակուած առաջնորդի կամ վանհօր անմիջական իրաւասութեան ենթակայ էին եւ ասիկա՝ (եր միարաններով) գաւառային կամ չըմանակային հոգեւոր առաջնորդութեան՝ պատրիարքութեան՝ կաթողիկոսութեան: Հաւառակ անոր որ Վասպուրական ինքնադլուին կաթողիկոսութիւն ունէր, սակայն նուազ չէ թիւը այն վանքերու, որոնք էջ-

³⁵ Կ. Պոլիս 1807ին տպուած «Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալ»ի մէջ կայ՝ «Աղուցանն պարեզօտ սպիտակ... եւ փիւրն սպիտակ ի շուրջն եւ զաջ ափն ի վեր եւ դիւր զնեն ի ձեռին, այսինքն յաւետարանէն մէկ տան զսկիզբն, մէկ տան վերջն եւ փոքր զատառակաւ խունկ զիցեն: Եւ եթէ կրօնաւոր էջ՝ իւր զգետինն պարտ է զնէ» (էջ 348):

³⁶ Աղթամարի, Լիմի ու Կոտայի՝ Բոնուենաց ծովի եզերք ունեցած «Իրսի տունները» կղզիներու մէջ կատուցուած (մայր) վանքերու մաս համարուելով՝ անջատ առաջնորդութիւն եւ մատակարարութիւն չեն ունեցած:

³⁷ Աղթամարի Յակոբ եպիսկոպոս տեղապահը, ու Կոտայի գործակատար Անանիա եւ Յակոբ վարդապետները 1867ին Կ. Պոլսոյ Ազգ. Խոն ժողովին կ'առաջարկեն Վասպուրականի 51 վանքերը յիշուած շրջա մեծ վանքերու վրայ բամբուլ ու զանաք կառուցել, բայց անոնց մուտքերէն Կ. Պոլսոյ պատրիարքարանի եւ Վանի առաջնորդութեան եւս մաս հանել (Մաղիկ, 1877, Թ. 813):

տաճարս սուրբ Աստուածածնի ձեռամբ Ստեփաննոսի, որոյ մականունն հա...» եղծուած (Բիւզանդիոն, 1900, Թ. 1196):

³⁴ Լեմբերգի մէջ 1631ին գրուած Մաշտոցի մը մէջ կայ՝ «Կանոն յորժամ կրօնաւոր վաղճանի» (Տաշեան, Յուց. հայ. Ձեռ. կայսր. Մատենադարանի ի վեհնա, էջ 11): Տե՛սնել՝ Monk's funeral հայադէտ Conybeareի Rituale Armenorum (Oxford, 1905) ընտրի աշխատութեան մէջ (էջ 161—164):

միածնի գերիշխանութիւնը կը ճանչնային եւ առաջնորդական ու ներքին խնդիրներու եւ վէճերու մէջ անոր ձայնը կ'ունկնդրէին: Պակաս չեն եղած զոյգ կաթողիկոսութիւններու միջեւ վանքերու մասին զբաւոր եւ բերանացի անհասկացողութիւններ եւ նմանապէս ոտնձգութիւններ:

16. ԿԱՆՈՆՆԵՐ

Եթէ անհատին անհրաժեշտ է հետեւել ուրուազմի ու կանոնի՝ նպատակի մը անվրէպ ու անշեղ ժամանումի համար, որքան աւելի կանոնի եւ օրէնքի պէտք է լծուել հաւաքականութիւնը կամ հասարակութիւնը, կազմուած զանազան անձերէ, որոնց իւրաքանչիւրը օժտուած է հոգեկան ու մարմնական ուրոյն նկարագրով, միտումով, խորհրդակերպով եւ սովորութիւններով — բարի ու չար, տկար ու զորաւոր, բնածին եւ ստացուած — որպէս զի հասնի զծուած նպատակին՝ առանց խաչաձեւումի, առանց թախտումի, առանց սայթաքումի:

Հաւաքականութիւն՝ հասարակութիւն կ'անվանուին, կամ միարանութիւնը, որ թէեւ նախապէս աւելի ճշնաւորութիւն եւ միայնակեցութիւն, շատ շուտ համախմբումի եւ ընկերութեան վերածուած: Նախապէս առաջնորդներու կամքը — Աւետարանի եւ եկեղեցւոյ խրատներու եւ օրէնքներու վրայէն կազապարուած — կ'ըլլայ կանոն աննշեաց: Սակայն կամայ կամաց սոյն առաջնորդներու եւ հոգեւորական կեանքի ներհուն անձերու հրահանգներն ու հրամանները, խրատներն ու յորդորները, տիրող սովորութիւնները կանոնի եւ օրէնքի կը վերածուին — միշտ անկընդէտ այն նպատակին, որ համայնքը կ'որդեգրէ:

Հայաստանի վանքերու մէջ ընդունելութիւն կը գտնեն Ս. Սահակի³⁸, բայց մանաւանդ Ս. Բարսեղի վանականներու համար յորինած կանոնները — հարկաւ որոշ փոփոխութիւններով՝ վանքին նպատակէն ազդուած ու առաջնորդուած: Ասորիկ կը

զրէ՝ «Մաշտոց ի մանկութենէ խոտաբուս կենօք կեցեալ անապատաւոր ճշնութեամբ, որ եւ ի ծովուն Գեղամայ զկղզին Սեւանայ բնակութիւն իւր արարեալ...: Յոր միացեալ ժողովեցան եղբարց բազմութիւն կանոնադրութեան սահմանաւ սրբոյն Բարսեղի» (Պոմ. էջ 160, հմմտ. եւ էջ 181): Նա այլուր կը հաղորդէ՝ «Յովհաննէս եկեալ բնակեցաւ յառաջ ասացեալ տեղին Կամրջաձոր, կանոն կարգի ունելով զսահմանադրութիւն սրբոյն Բարսեղի հայրապետին» (անդ էջ 174) եւ Կամրջաձորի եւ Հոռոմոսի վանքերու հիմնարկութիւնը զեկուցանել վերջ՝ կը յաւելու — «Այսպէս եւ յայսմ ժամանակիս շինեցաւ. Նարեկ ի Ռչտունեաց դաւառին նոյն կարգաւորութեամբ» (անդ էջ 174), որ ըսել է՝ Նարեկի մէջ (Վասպուրականի մէջ) եւս Ս. Բարսեղի կանոններն ընդունուած եւ պարտաւորիչ էին: Ասոր կու գայ կը կցի ուրիշ սպացոյց մը՝ «Ռէշ. գրեցաւ կանոնական սահմանադրութիւն ուղղութեանց յորժամ խրատու վանականաց յարմարեալ եւ շարակարգեալ... ի մեծէ եպիսկոպոսապետ կեսարու Կապազովկացւոց սրբոյն Բարսեղի, զոր ետ գրել զսա Ստեփանոս վարդապետն. զոր ետ գրել զսա յիշատակ Լմայ անապատին» եւ է սա յիշատակ Լմայ անապատին» (Չարբհանէլեան, Հայկ. թրգմ. նախնեաց, էջ 338):

Ներսէս Ծնորճալի (հմմտ. Ընդհր. Թուղթ, Վեհեթիկ, 1838, էջ 88—89, 106), Միխիթար Գօշ (Դատաստանաղիք, Վարդապատ, 1880, էջ 85, 88), Առաքել Սիւնեցի (Արարատ, 1906, էջ 609, հմմտ. եւ Լոյս, 1905, էջ 470) եւ արտագրութիւններ (հմմտ. Չարբհան, ձամբ. ի Մեծն Հայաստան, Ա. էջ 42—43) կը հաստատեն Բարսեղի կանոններու մուտքն ու պարտաւորութիւնը հայկական վանքերու մէջ:

Շատ ուշ Ն. Լամբրոնացին հայերէնի կը թարգմանէ Ս. Բենեդիկտոսի կանոնները, որոնք բաղձացուած ընդունելութիւնը չեն գտնիր: Նա կը զրէ՝ «Թարգմանեցի գնորուն Բենեդիքտոսի կարգ եւ դաւրէնս կրաւնաւորաց նոյն ժամայն ի լատին լեզուէն ի փոսնդ ի վանս սուրբ Պաւղոսի...» (Չարբհանէլեան, Հայկ. թրգմ. նախնեաց էջ 345): Սոյն կանոնները — այլազան թարգմանութեամբ — հրատարակուած՝ Վեհեթիկ, 1880, Վեհեթիկ, 1842:

³⁸ Հայ կանոնագրքի մէջ Ս. Սահակ Պարթեւ հայրապետի անունով հասած են եկեղեց. շատ մը կանոններ, որոնց մէջ վանականներն եւս նկատուողութեան անունով: Կայ յատուկէն՝ «Նորին Ս. Սահակ» թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց (հմմտ. Ղրտճեան՝ Կանոնագրք Հայոց, էջ 29, Մեղիթ-թանգեան՝ Հայոց եկեղ. իրաւունքը, էջ 540):

Հայերէնի կը թարգմանուին նաև «Կանոնք երանելոյն Օգոստինոսի Հռովմայ եպիսկոպոսի վասն կրօնաւորաց», («նախ քան դամենայն եղբարք սիրելիք, պարտիմք սիրելի զԱստուած, յետ այնորիկ զընկերն...») եւ «նորին երանելոյն Օգոստինոսի խրատ ոգեչաճ վասն տարեփորձայն եւ նորամտիցն ի կարգն» («նախ պարտիս ի միտ ածել թէ առ ինչ եւ ուստի ես...») հմմտ. Համամձեան, Յուլ. հայ. Ձեռ. Գաղատ. Թ. 11, Կանոնադիրք-Դատաստանագիրք Ա. Սասնեցիի): Միարանող եղբարց համար էին «Կացուցմունք կարգի եղբարց Քարողոցաց. այսինքն՝ կանոնք կարգի Գոմինիկեանց, Քոնեցուոյն թարգմանեալ...» (Ալիշան, Սիսական, էջ 385):

Վարդան Այգեկցիին ունի «Յաստուածային սուրբ գրոց խրատք վասն վարուց անաքինութեան կարճ ի կարճոյ եւ համառօտ միայն դրանիցն... առ մանկազոյն կրօնաւորս որ կան ի կարգն կրօնաւորութեան եւ կամ միանձնութեան» եւն (հմմտ. Маррѣ, Сборники притчъ Вардана Матеріалы... 1899, էջ 297, 344—345): Միթիար Գօշ իր Դատաստանագրքին մէջ վանականներու հայող շատ մը կանոններ կը յիշատակէ եւ անոնց վրայ նորեր կը յաւելու եւ կամ զանոնք կը բարեփոխէ (հմմտ. հրտ. Բատամեանի 1880, Վաղարշապատ (էջ 13—14, 85—88, 95 եւն եւն):

Հայկական վանքերու մէջ Ս. Բարսեղի կանոններէն զատ կը յարգուէին զարբերէ եկած սովորութիւնները, նաև այն հրահանգներն ու կանոնները, որոնք կաթողիկոսներէ, հայրապետներէ, վանական կեանքի հմուտ անձերէ (հմմտ. վերը), մանաւանդ Սարգիս եւ Կիրակոս վանական կեանքի վերանորոգողներէ եւ Սիմէոն Այրիվանեցիէն զրուած ու յանձնարարուած էին³⁹:

³⁹ Վանքերու մէջ կը պահուէին ու կը յարգուէին թէև Ս. Գրիգորի ընծայուած, բայց վերջին գործերու գործ «Յաճախապատումի» (այլ. էջմիածին, 1894), Եղիշէի անուշով հասած «Բան յաղապս միանձնաց» ի (այլ. Վենետիկ 1859 եւն Յ. Մանդակունիի «Քրտաց վանականաց միանձնաց» ի (Չարքահանէի, Պոմ. հայկ. հին գոյ. Ա. էջ 333), Ներսէս Ծնորճալիի Ընդհանրական թղթի (այլ. Վենետիկ, 1838, 1893 եւն), Առաքել Դաւրթեցիի յառաջ բերած Մեծ անապատի (Պոմ. էջ 252, 256) կանոններն ու խրատները: — Գարձեալ գիտենք թէ՛ Յովհաննէս Մեծոփեցի «գարգարեաց գոտրք ուխտն» (Մեծոփայ). եւ գեղեցիկ կարգաւորութեամբ» (Վ.Վ.Վ., Բ. էջ 430), Կոստանի մէջ Ա. Գարձեցիին կը հաստատէ՝ «Ծնիցիին անապատ եւ եղբայրանոց եւ կ'այժմ հաստատ ամենայն կրօնաւորական կարգօք» (Պոմ. էջ 534, Վ.Վ.Վ. Ա. 64): Գէորգ Մեղրիկ եւ Կիրակոս վարդապետ վանական կանոններ կը գնեն

Գարձեալ կը պահուէին հայկական Կանոնագրքի մէջ վանականներու համար զրուած կանոնները, որոնցմէ մասի մը յիշուելու պատենութիւնը ներկայացաւ եւ մաս մըն ալ դեռ յառաջ պիտի բերուէ:

Վանականները պէտք էին առաջնորդներու ձայնին հետեւել՝ «Եպիսկոպոսք իւրաքանչիւր վիճակաց եւ անապատից տեսչութիւն եւ հոգարարութիւն արասցեն, ի լոյս եւ ի պաշտօն եւ ի դպրոցս հայել... նոյնպէս եւ վանաց երիցունք եւ քահանայք վարդապետին ի հնազանդութեան կայցեն...» (Ղլտձեան, Կան. Հրց. էջ 122, Գ. Կան. Գունոյ Գ ժողովի):

Վանական օրէնքներու եւ կանոններու պահպանութեան մէջ նախանձախնդիր ու բռնախնդիր միաբաններ շատ եղած են, սակայն սակաւ չէ թիւը եւ անոնց, որոնք զանոնք ոտնկոխ ըրած են, վանքին մէջ տեսակ մը աշխարհիկի ազատ կեանք վարելով եւ գայթակղութիւն սերմանելով: Ներսէս Ծնորճալիին կը յորդորէ առաջնորդները հսկելու՝ անուղղայ կրօնաւորը մերժել, բայց ընդունիլ երբ՝ «զգջացեալ դարձցի յուղղութիւն» (Թուղթ Ընդհր., էջ 87):

«Բան խրատու յաղապս միանձնաց» ի հեղինակը (Եղիշէն՝ աւանդուած) շատ տխուր կ'արտայայտուի՝ «Եւ արդ ես տեսանեմ ի մերում աշխարհիս եւ ոչ զորք ազատեալ յայսպիսի՝ աղետից: Յետս ընդդէմ ընթերցաք զԵղեցիի գրեալն՝ ի պատճառս ուխտաւորութեան հեռացաք ի սուրբ ծնողացն եւ արարաք բազում հարս օտարոտիս... մտաք ընդ հարկաւ ստացուածոց, որ լի են անառակ ազահութեամբ... փառիկանամք յանկողինս յարմարեալ...: Կօշիկը ոտից մերոց յանդիմանեն զմեզ՝ եթէ ոչ են սուրբ ճանապարհք մեր: Հանդերձք մեր ազազակեն զգործոց մերոց, եթէ մերկ եմք յերկնաւոր զգեստուցն...: Մրզուզք անյազք եղաք ի կերակուրս եւ առանց չափոյ արբաք զինի պղտորիչ խորհրդոց եւ մտաց...» (Մատենագր. Եղիշէի, Վենետիկ, 1859, էջ 162—163):

(Ալիշան, Սիսական, էջ 331: Յետին շրջաններու կանոնագրութիւններ հմմտ. Ոսկեան Հ. Հ., Սերատախայի վանքերը, Վիեննա 1946, էջ 67, Աղապատ Արարատեան, 1848, էջ 142, 150, Մելիք Թանդեան, Հայ. եկեղ. իրաւունքը, Բ. էջ 64, 149, Սահմանադրական հրահանգ. ազգ. վանօրէնց համար, Կ. Պոլիս 1872, էջ 5—85): — Էջմիածնի կաթողիկոսի վանքերու մէջ կարգեր հաստատելու, վերջնելու եւ լրացնելու իշխանութեան մասին հմմտ. Արարատ, 1894, էջ 361:

Ղազար Փարպեցիին Վահան Մամիկոնեանին գրած թղթին մէջ հայ վանականին՝ արեղային մութ պատկերը կը դժէ: Որքան ալ անոր վրձինը յուզումով կը շարժի եւ դուցէ անոր հետեւանքով ծուռ դժեր եւս կրնայ յայտ բերել, սակայն կարելի՞ է խորհիլ, որ անոր ըսածներն իրականութենէ բոլորովին հեռու ըլլան: Կը գրէ՝ «Իսկ Հայոց արեղէնքս առ դառնաշունչ նախանձու, որ միացեալ է ի սիրտս նոցա զնոցունց հակառակն երկնեն եւ արդարեւ ըստ ասացածի մարգարէին՝ Յղանան զցաւս եւ ծնանին զանօրէնութիւն, ազօթս իսկ չառնեն ի վերայ ասողին, այլ եւ եթէ յանկարծ շնորհի բան ի մարդասիրէն՝ հեղձնուն ի նախանձուէ: Եթէ զոր տեսանեն ի ժողովրդենէն եթէ գովէ՝ ծաղր առնելով ամաչեցուցանեն» (Քնն. հրատ. Ղ. Փարպեցու պատմութեան եւ թղթի, Տփղիս 1904, էջ 200):

Շահապիվանի ժողովը գիտէ արեղաներ, որոնք հարցուկի կ'երթան (Ղլտձեան, Կան. Հայոց, էջ 68):

Ներսէսի եւ Ներշապուհի (Գունի Բ. ժող.) կանոնները կը պահանջեն՝ «Այլ ոմանք ձիարոյժք եւ վաճառականք եւ վաշխառուք փոխանակ կրօնաւորութեան՝ շահատոգովք, յայտհետէ դադարեացն եւ ապաշխարեացն զմեզն, զոր մեղան, ապա թէ ոչ յանդիման արժանի դործոցն պատիժս կրեացն» (Կան. ԼԶ. հմմտ. Ղլտձեան, Կան. Հայոց, էջ 116):

Էջմիածնի Թ. 640 Ձեռագրին մէջ (1297ին գրուած), կայ՝ թղ. 274 «Հարցումն Աշոտոյ որդու Սմբատայ Հայոց թագաւորին եւ պատասխանի Եղնկայ վարդապետի» ուր կ'ըսուի «Թագաւորն ասէ. Ազանիմ չուխայս եւ ապաշխարեմ զիմ յանցանսն»:

Եղնակ ասէ. Չկարես կրօնաւորութեամբ ապաշխարել. զի ի մեր ժամանակս նուազեալ է կրօնաւորութիւնն եւ դու ծեր ես եւ թագաւոր. Չկարես առաւելութիւն առնել ի կրօնաւորութիւնն, զի տեսանես զանկարգութիւն եւ անյուսութեամբ հանապազ պղտորիս: Կալ զթագաւորութիւնդ իրաւամբ եւ ոչորմութեամբ եւ հաշտի ընդ քեզ Քրիստոս:

Թագաւորն ասէ. Տեսանեմ զվանաւրայսդ բազմացեալ եւ ամենայն իրաւք լցեալ եւ զուսես եթէ նուազեալ է կրօնաւորական կարգն:

Եղնակ ասէ. «Որք միարան չեն, չկայ առ

նոսա բարեգործութիւն, զի չեն ի գործ Աստուծոյ եկեալ, յայլ յանձնիշխանականսն եւ գոր ինչ բարի գործեն մարմնաւոր է եւ մարդահաճոյ եւ ոչ վասն փառաց Աստուծոյ...» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. տ. 900):

Ներսէս Ծնորճալիին կը ճանչնայ «աշխարհասէր» ու «մեղկ» վանականներ, որոնք՝ «Ի դիւղս եւ ի քաղաքս բնակին» եւ «ի բանից բերանոյ դարչութիւնս եւ ի գործս վատթարութեան եւ յորովայնամոլութիւնս անպատկառս եւ յարբեցութիւնս յանառականս եւ յամենայն անկարգութեանց բերմունս առաւելուն» (Ընդհր. թուղթ, էջ 68): Եւ կ'ըսէ որ՝ «Այս եղիցի կանոնական օրէնք ի վերայ այսպիսեացն՝ փոխիլ այսուհետեւ զբնակութիւնս ի վանս եւ զվարս իւրեանց ըստ ձեւոյն եւ ըստ կարգին յապաշխարութիւն...»: Հակառակողներուն եւ անաստողներուն համար կը սահմանէ՝ «Ոչ հազորդութեան եւ ոչ օրինաւոր թաղման արժանի առնել» (անդ, էջ 69): Կը պախարակէ վանականներու վանքէ վանք, փոխուելը, շատակերութիւնը, ընչաբաղոցութիւնը, այդեղործութեան չափազանց յսրումը եւն եւն (անդ, էջ 70—99):

Ն. Լամբրոնացիին Ձորագետի վանականները՝ «տխմարք եւ անկարգք» կը ներկայացնէ, ինչպէս եւ «նախանձոտ» եւ «թարձրատրոս» (Գրիգոր Տուտէորդին, հմմտ. թուղթ Ն. Լամբրոնացու առ Լեւոն թգ. Հայոց, Վենետիկ 1838, էջ 204—227): Նոյներու (Հաղբատացիներու) համար Գր. Տղայ կ'արտայայտուի թէ՛ «հեռի էք յամենայն գիտութենէ չին եւ նոր կտակարանաց...» եւ թէ ունին «անձնահաճ կամք» (Գր. Կաթ. Տղայի Նամականի, Վենետիկ 1838, էջ 10 եւ 24):

Առաքել Դաւրթեցիին շատ տխուր կը նկարագրէ Ժէ. դարու վանքերն ու վանական կեանքը՝ «Վասն զի ամենայն վանօրայք ազգիս Հայոց իւրաքանչիւր սեւազլուխ ունէր իւր զինչս առանձին այգի եւ բուրաստան եւ փեթակ եւ տուն եւ մառան եւ համարանոցս եւ զմուտս ստացուածոց, նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին: Եւ զայն ամենայն ինքեանց եւ ազգայնոց եւ իւրեանց հաճելեաց արանց ծախէին ի պէտս կարեաց: Եւ զնուրեալ տեղիսն Աստուծոյ... լցեալ էին զայնոսիկ կանամբք եւ տանտիկնօք եւ իւրեանց աղապնօք:

Եւ բնաւ ոչ զիտէին թէ՛ պարտ է կարգաւորի վեղար եւ փրկոն ունել զիւրեալ, կամ հանդերձս խոշորս եւ ասուիս զգեհուլ, այլ որպէս աշխարհական եւ զմարմնաւոր իշխանս փափուկ եւ աղնիւ զգեստիւ պըճնէին...: Այլ եւ ոչ վարկանէին թէ՛ պարտ է վանականաց պահօք եւ ծոմաջանիւք երկօք կենցաղավարիլ, այլ ի բոլոր տարին ուտիք եւ գինի եւ միս անխտիր...: Արեղայք ըստ ասացելուս անուղղայ կարգօք լեալ թափառականք» (Պատմ., էջ 288—289):

Անկարգ ու անկանոնապահ արեղաներու կամ վանականներու վրայ շատ ծանրացանք, սակայն երբեք չենք յանդգնիր վարկանելու որ՝ վանքերու մէջ լաւ ու օրինապահ միաբաններ սակաւ էին: Անոնց մասին ստէպ յիշատակութիւն եղաւ (հմմտ. վերը, դարձեալ Վ.Վ. Ա. 27, 39 եւն եւն):

Դարձեալ հարկ է շեշտել որ՝ դարերու ընթացքին երեւան կու գան բարեկարգութեան եւ վերազարթնումի նախանձախնդիր անհատներ, որոնք թոյլ հողիները կը ցնցեն եւ նոր եռանդ ու կեանք կը բերեն վանքերու մէջ: Այսպիսիներ են՝ Սարգիս եպիսկոպոս ու Կիրակոս Տրապիզոնցի եւ Ներսէս Մոկացի (հմմտ. վերը): Իսկ վերջին դարերու վանական կարգերու անկածութեան դէմ կղերականին հետ աշխարհիկն անդամ բողոք կը բառնայ (հմմտ. Փոնջ, 1880, Թ. 1482—1483, 1503, 1881, Թ. 1624, Մասիս, 1892, Թ. 3966, էջ 171—176 եւն եւն):

17. ՎԱՆՔԵՐՈՒ ԿԱՄ ՎԱՆԱԿԱՆՔԵՐՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կանոնները դրուած են, որպէս զի վանականը կարենայ դիւրաւ եւ անշեղ հասնիլ այն նպատակին կամ նպատակներուն, որոնք անոր առջեւ ներկայացած են եւ անիկա գանոնք լրջօրէն նկատելէ յետոյ՝ անոնց հասնելու ինքզինքը պարտաւորած է — աղաւթակա՛մ:

Վանական կամ կրօնաւորական կեանքի նուիրուողի առջեւ երեք նպատակներ զըլխաւորաբար կը տարածուին՝ — երեքն ալ միշտ Աստուծոյ հետ աղերսի մէջ մտած:

- ա. Անհատի կատարելութեան ձգտում.
- բ. Գործակցութիւն ընկերի փրկութեան
- գ. Դիտութեան մշակում:

Այս նպատակներուն կրնան կցուիլ եւ միացած են մասնական նպատակներ ու վախճաններ՝ հիւրասիրութիւն, հիւանդներու

րու խնամք, քարոզչութիւն, որոնք անոնցմէ արդէն կը բղխեն:

Յատաշարքը նպատակէտներու ժամանելու համար կանոններու մէջ յատուկէն շեշտուած են գլխաւորաբար՝

ա. Ամուրիութիւն (եւ կուսութիւն կամ սղջախոհութիւն) հնազանդութիւն եւ աղքատութիւն.

բ. Պահք ու ծոմ կամ մեռուցում եւ ժուժկալութիւն.

գ. Աղօթք, ժամասացութիւն ու Պատարագ.

դ. Չանազան արտաքին զբաղումներ, մանաւանդ գիտութեան զարգացում ու մշակում:

Նկատողութեան առնունք զանոնք:

18. ԱՄՈՒՐԻՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԿՈՒՍՈՒԹԻՒՆ, ՀՆԱԶԱՆՊՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ

Ճգնաւորական-վանական կեանքը կամաւոր մեռուցումի եւ զրկումի կեանք է: Անոր հետեւողը պէտք է հրաժարիլ զգայական ու աշխարհիկ հաճոյքներէ, վայելքներէ, աղատութենէ, հարստութենէ եւ փառքէ: Ասոնցմէ մաս մը սոյն վիճակին անյարիր է: Ան որ տան — կնոջ եւ զաւակի — կապուած է եւ անհատական հաշիւներով բեռնաւորուած ի՞նչպէս կրնայ միաբանական կեանք վարել եւ ապրիլ նոյն շէնքի մէջ՝ նոյն յարկի տակ:

ա. Ամուրիութիւնը⁴⁰ կամ կուսութիւնը ճգնաւորական-վանական կեանքի համար անհրաժեշտութիւն է: Որքա՞ն ուղիղ եւ պայծառ են Եզնիկի խօսքերը՝ «Նա եւ կուսանք սրբոյ եկեղեցւոյ ոչ վասն այնորիկ պահեն զկուսութիւն, եթէ զամուսնութիւն տուեալ յԱստուծոյ պղծութիւն համարիցին, որպէս Մարկիոնն եւ Մանի եւ մճղնայք, զի եթէ յայն միտս ուխտաւորք էին, ապա կուսութիւն չէր յանգարի կուսութեան, այլ վասն առաւել սիրելոյ զԱստուծոյ, ի բարեք արարածոց Աստուծոյ հրաժարեն, զի նմանեալք հրեշտակաց Աստուծոյ, ուր ոչ արուն է եւ ոչ էգ, ցուցանիցեն եւ յերկրի զնոյն առաքինութիւն» (Եղծ Աղանդոց, Վենետիկ 1836, էջ 287—288): Գրիգոր Լուսաւորչի ընծայուած Վաղարշապատի ժողովի կանոններէն է՝ (Կան. Լ.) «Որ

⁴⁰ Ամուսնացած անձ մը կրնար եւ կրնայ կրօնաւորական վիճակի հետեւիլ՝ կնոջ ազատակամ ու լիակատար հրաժարումով ու հաւանութեամբ կամ անոր մահով:

նուիրէ զանձն իւր Աստուծոյ կոյս⁴¹ մի իշխեսցէ ամուսնանալ, ապա եթէ զտցի, ի հաղորդութենէ անկեալ հեռացի, եւ եպիսկոպոսն տեսցէ զվարս եւ որպէս կամի մարդասիրեսցէ, (Ղլտճեան, Կանոնադիրք Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 12⁴²):

Շախիտայի աշակերտակից Եպիփանի մասին Բուզանդ կը պատմէ՝ «Եւ մինչդեռ երթային (Եպիփան եւ իր աշակերտները) ի ճանապարհին դիպեցաւ նոցա կին մի, իրբեւ անցին ընդ կինն, սկսաւ փորձել զնոսա Եպիփան եւ ասէ. Իբրե՛ւ զի գեղեցիկ էր կինն եւ վայելուչ: Ասէ մանուկ մի յաշակերտաց անտի, Կինն, զոր դու գովեցեր, միականի էր: Եւ ասէ սուրբն Եպիփան. դու բնաւ ընդէ՞ր նայեցար տեսանել զերեսս նորա. տեսանե՞ս զի խորհուրդք շարք կան ի քեզ: Եւ անդէն մեկնեաց զմանուկն յիւրմէ եւ հալածեաց զնա» (Պատմ. Պետերբուրգ, 1883, էջ 187): Շահապիլպանի ժողովի ԺԵ. կանոնը, որ հայ վանականութեան դադարաբանը կարծես խտացուցած՝ ներկայացուցած է՝ կը սկսի՝ «Եթէ ոք ի հաւատս կացցէ կամ միայնակեաց կամ ի իննել, զկուսութիւն եւ զսրբութիւն պահել⁴³»: Դուրսի Բ. ժողովի ԼԳ. կանոնը

⁴¹ Նոյն կանոններէն է «Որ զկուսութիւն իւր Աստուծոյ նուիրեալ եւ ապականեցաւ Ե. ամ ապաշխարհեցէ» ԺԳ. կան. Ս. Գրիգորի հմմտ. Ղլտճեան, Կան. Հյց., էջ 109: — Չգուշութեան համար անաղատականն նոյն իսկ մկրտել ու պսակ գնել կարգելուի (անդ, էջ 11, Կան. Բ.):

⁴² Այլ՝ ճգնաւոր — վանականներու մասին տրուած կանոնները գլխաւորաբար նկատի առած ենք: Անոնք որոշ փոփոխութեամբ կին՝ կուսան՝ — վանականներու համար եւս կ'արժէին:

⁴³ Սոյն ընտիր կանոնն է կարեւոր կէտերովը՝ «Եթէ ոք ի հաւատս կացցէ, միայնակեաց կամ ի իննել զկուսութիւն եւ զսրբութիւն պահել եւ կենացն յաւիտեանց հասանել, ընդ ընկերս կացցէ, ընդ ճշմարիտս եւ ընդ միաբանակիցս եւ ի միմեանց շահեցին սիրովն Քրիստոսի, զի յեղբօրէ օգնեալ իրբեւ զպարիսպ ամուր եւ թէ Աստուծոյ բնակեցուցանէ զմիակրօնս ի տան...: Մի լիցի սովորութիւն միայն լինել, ապա զիւրք կարեն դիտել զկարգ եւ զպայման հաւատոյ եւ կամ զհայցուածն իւր ի միտ անուղ կամ զհնազանդութիւն եւ զտէր առ ընկերն ցուցանել...: Չանարգ եւ զպայթոր զեղբայրս ի ձեռն հոգեւոր իրատու ի պատուական հանել...: Լռեցո զլեզու քո ի շարութենէ եւ ի նենդութենէ...»

Չարձաթ ի վարձու ոչ տալ եւ տոկոսեօք ոչ պահանջել, զգրաւ պարտականին վաղվաղակի դարձուցանել... մի հպարտ... մի ի հպտանս... մի կամաւոր յուսմանէ... մի հեղալ յաղօթս... մի ասել զպահս եւ զճգնութիւնս...: Որ միայնակեաց կամ ի իննել եւ կուսան եւ զարեղայութիւն յանձն անուղ, կանոն այս կայցի, ամենայն ոք ի հաւատս կացցէ, կանոն այս կայցի, ամենայն ոք ի հաւատս կացցէ, ամբողջապէս Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 76): Ս. Սահակի կանոններուն մէջ կը շեշտուի՝ «... ի նմանութիւն բերել անձինս հրեշտակական վարուց... (անդ, էջ 28 — ԼԳ. կան.):

վանականներու կուսութեան պահպանութեան նախանձախնդիր կը սահմանէ՝ «Եւ մի՛ ամենեւին, որպէս լուսք, հացարար եւ կովկիթ կամ խնեցեհար ի վանսն տարցի կին մարդ, զի ուր չէր հնար մտանել կործանեաց զմարդն, ապա զիւրսն զինչ իսկ առնէ» (Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 116, հմմտ. եւ էջ 127 կամ վերը):

Նմանապէս Չաղաթանքի Ա. կանոնը կը դրէ՝ «Առաջին որ միաբան լինի վանքն եւ չլինի ուրիշ լուծք եւ անասունք եւ պատճառ դայթազութեան եւ ոչ սանամայր, ոչ մայրազիր, ոչ քորազիր բնաւ եւ ոչ մայր եւ քոյր ումեք եւ ազգական ի վանքն» (անդ, էջ 187): Նոյն ժողովի Թ. կանոնն է՝ «Առանց մեծ հարկի արեղայ ի մօտաւոր գեղ չօթէ եւ ոչ կին ի վանս...» (անդ, էջ 188): Այդ կէտը աւելի կը շեշտուի Դուրսի Բ. ժողովի ԺԳ—ԺԷ կանոններով՝ «Եւ որ յանապատս բնակեալ են ուխտաւորք, յառաջ քան զմտանել արեղական դնացին եւ յորժամ ծագէ արեղակն երթիցեն, զուցէ ի սխալանս անկանիցին: Իսկ մոնողոնք եւ վանաց մանկունք վանս մի ուրեք իշխեսցեն ունել, բայց ի վանս, ապա եթէ վանք ոչ իցեն, յաւազ երկցուն տունն երթիցեն, զի չէ իշխանութիւն յայլ տան աւթել եւ մի լիցի ի լսել թէ՛ մի վանք՝ բաղում վանք՝ որ ոչ է այս հասարակ ըստ առաքելոցն կարգի» (անդ, էջ 116): Նմանապէս Դւնոյ (648) ժողովը կը դատապարտէ «ընտանեօք ի վանս» նստիլը (Կան. Ժ. Ղլտճեան, Կան. Հայոց, էջ 127): Նոյն ժողովի ուրիշ մէկ կանոնը (ԺԲ. անդ, էջ 128) կ'արտայայտուի՝ «Ոմանք յազատաց եւ յոամիկ հեծելոց հասանելով ի գեւղս ուրեք, թողեալ զգեւղն ի վանս առնեն իջեւանս եւ ի յարկս սրբոց եւ զուսանօք եւ վարձակօք պղծեն զնուիրեալ տեղիսն Աստուծոյ, զոր սոսկալի է քրիստոնէից լսել թող թէ առնել» եւ կը ցանկայ այդ սովորութեան խախտումը:

Վանականները բնական է կը ջանային կուսութեան նկատմամբ տրուած խրատներն ու կանոնները յարգել ու պահել: Հայրն թողիկ վարդ պատրիկի կնոջ, որ կ'աղերսէր Գլակի եկեղեցին մտնելու թոյլատուութիւն չնորհել՝ կը բարբառի՝ «Ո՛չ՝ զայդ հրաման տուեալ եմք յառաջնոցն եւ ոչ իշխեմք առնել» (Յովհ. Մամիկոնեան, Պատմ. Տարօնոյ, Վենետիկ, 1832, էջ 11): Լիմի եւ Կոուցի

